ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№_____ «_____» _____ 2022թ.

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածով.

1. Երևանի ենթակայության «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) հաշվապահական հաշվեկշռում հաշվառված Մերսեդես-Բենց E240 մակնիշի /պետհամարանիշ՝ 834LL62/ տրանսպորտային միջոցի օտարման մեկնարկային գին սահմանել «ԱՐԹԻՆ Էնթրփրայս» ՍՊԸ-ի կողմից գնահատված շուկայական արժեքը՝ 1,477,297.0 /մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր իննսունյոթ/ ՀՀ դրամ:

2. Հանձնարարել Ընկերության տնօրենին՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունում կատարել օտարված ավտոմեքենային վերաբերող համապատասխան փաստաթղթերի ձևակերպումները:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի և Ընկերության տնօրենի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Գ.Սիմոնյանի վրա:

Recoverable Signature

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ